լութիւն Ցունաց վասն սոցին իրաց, և Հայք բազում ՁԼա-
սիւք պաշտպանեցին զիրաւունս իւրեանց, (1820—21)։
Ցոյնք յաւելին յարուցանել զայլ իմն վէճ, զի բանալի ար-
տաքին երկաթեայ դրան եկեղեցւոյն Բեթղեհէմի գոլով
'ի ձեռս նոցա, 'ի գնալ անդ ուխտաւորացն Հայոց, տային
սպասել առաջի դրան, և հուսկ ուրեմն բանային զդուռն
թշնամանելով զնոսա։ Եւ ապա հնարեցին զայլ իմն նեն-
գութիւն. չինեցին 'ի վերայ երկաթեայ դրան տախտակա-
մած քիւ (սաչադ), պատճառելով զզօրս արքունի, որպէս
թէ 'ի նստիլ նոցա առաջի դրան պատսպարեսցին յարեւոյ
եւ յանձրեւէ, այլ Հայք ամբաստան եղեն զնմանէ, թէ
գողք և աւազակք ելեալ անտի մտանեն 'ի վանս նոցա, և
զկնի քննութեան եռուն քակել զայն (1819. 'ի 20 Փե-
տրուարի), եւ քարամբք յարդարեցին զյատակ արտաքին
դաւթի եկեղեցւոյն սակաւ ինչ իբր բաժին Հայոց, հաւա-
սարութեամբ պարսպի վանաց, և այն եւս բազում խռո-
վութեամբ և վիճմամբ, զի Ցոյնք կամէին զրովանդակն յար-
դարել, որպէս և արարին իսկ ('ի 23 Նոյեմբերի)։

Արդ՝ իշխանաւորք ազգին եւ Պատրիարքն հանդար-
տեալ 'ի վանդաւոր հոգոյ, զի զբաղեալ էին վասն ազա-
տութեան Տ. Կիրակոս Կաթուղիկոսին տանն Կիլիկիոյ, որ
արգիլեալ էր անդ 'ի Կոստանդինուպոլիս Արքունի հրաման։
Ապա յորդորանօք Պօղոս Պատրիարքի գումարեցան
'ի Պատրիարքարան ('ի 12 Ցուլիսի) կարգաւորել զխնդիր
Երուսաղէմի։ Նախ անպատշաճ վարկան զընտրութիւն Պօ-
ղոսի 'ի Պատրիարքութիւն Աթոռոյն Երուսաղէմի, զի կարի
պիտոյ էր նա ինքեանց, և չէր արժան թողուլ նմա զայն
Աթոռ, և համակամ հաճութեամբ ընտրեցին զՆիկոմիդացի
Գաբրիէլ եպիսկոպոս, որ յայնժամ Փոխանորդ էր յԵրու-
սաղէմ, եւ գրեցին առ նա դիր շնորհաւորութեան, ծա-
նուցանելով նմա զընտրութիւն իւր, յոր ստորագրեցին ան-
ձինք 17 և պատուիրեցին նմա հաստատուն պահել զՄոր-
հրդականս և զկանոնադրութիւնն, զոր ազգովին հաստա-
տեալ էին յաւուրս Թէոդորոսի։ Պահել առ իւր իբր օգնա-
կան զՅակոբ վարդապետ Լիւսդրացի մինչ 'ի Զատիկ, զոր
առաքեալ էին իբրեւ Փոխանորդ 'ի կողմանէ իւրեանց,
մինչեւ պարզեսցի խնդիրն Բեթղեհէմի, և ապա տալ զը-